# ՍՓՅՈՒՌՔԸ ԱՐԴԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

ԱՆԱՆՅԱՆ Մ. Ա.

*XX դ. վերջին «սփյուռք» բառը ձեռք է բերել իմաստային լայն գործածություն: Մինչև 1970-ական թթ. սփյուռքագիտական ուսումնասիրությունները սահմանափակվել են հրեական, հայկական, մասամբ նաև աֆրիկյան և չինական սփյուռքի պատմությանը, առանձին շերտերին, համայնքներին, ինչպես նաև սփյուռք-հայրենիք հարաբերություններին և հայրենադարձությանն առնչվող հարցադրումներով[1]: 1980-ական թթ. վերջից «սփյուռքը» դարձավ լայնորեն կիրառվող հասկացություն՝ նկարագրելու համար մարդկանց շարժը իրենց հայրենիքից հեռու: Բառացիորեն, Սփյուռքը «մարդկանց խմբերի սփռումն» է այլ երկրներում և, ի տարբերություն միգրանտների, սփյուռքի անդամները կապված են ինչպես հայրենիքում, այնպես էլ այլ պետություններում բնակվող հայրենակիցների հետ[2]:*

*Ամերիկահայ սփյուռքագետ* ***Խաչիկ Թոլոյյանը*** *առաջիններից էր, որ քննության առավ Սփյուռքի նշանակությունը և բազմազանությունը ժամանակակից աշխարհում, ինչպես նաև դրա գիտական հետազոտության կարևորությունը: Հայտնի է, որ «սփյուռք» հասկացությունը առաջին անգամ կապվել է հրեաների սփռման հետ, և Խ. Թոլոյյանը հրեական սփյուռքը համարում է սփյուռքի դասական մոդել: Դասական լինելու հավակնություն, ըստ նրա, ունի նաև հայկական սփյուռքը: Վերջինս ձևավորվում է արտագաղթի պատճառով, որի հետևանքով ծագման երկրի սահմաններից մարդկանց մեծ զանգվածներ են հեռանում այլ երկրներ: Դրան զուգահեռ, կարող է տեղի ունենալ նաև մարդկանց կամավոր արտագաղթ: Սփյուռքի հիմքը կազմում են հստակ ինքնություն ունեցող հավաքականությունները, որոնք ձևավորվել են ելման երկրում՝ հայրենիքում: «Սփյուռքյան համայնքը» ընդունող երկրում ջանադրաբար պահպանում է ինքնագիտակցության հիմք համարվող կոլեկտիվ հիշողությունը և էթնոմշակութային սահմանները: Դա կարող է լինել սեփական կամքով կամ ընդունող երկրի բնակչության ճնշման տակ, որը խուսափում է ձուլել եկվոր խմբին, կամ այս երկու գործոնի համադրումով: Սփյուռքի համայնքները ձգտում են իրար հետ կապերը պահպանել և շարունակում են իրենց ընկալել որպես միասնական ընտանիք, և, ի վերջո, ելքի և սփռման հայեցակարգը վերափոխվում է միասնական ազգության գաղափարով, համայնքի անդամներն էլ*

---

[1] **Բեժանյան Ա.,** *Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2013, - 1, էջ 211):*

[2] *http://ysusociologyonline.blogspot.com/2008/10/blog-post_8125.html.*

*իրենց դիտարկում են որպես մեկ ամբողջություն՝ սփռված տարբեր պետությունների միջև[3]:*

*Սփյուռքագիտության զարգացման մեջ ուրույն դեր ունի նաև* ***Վ. Սաֆրանը****: Նա սահմանել է ժամանակակից Սփյուռքին բնորոշ գծերը, առանձնացրել է էթնոհամայնքային գիտակցությունը և միասնությունը՝ որպես հայրենիքի պահպանման կարևորագույն գործոններ: Նա այն տեսակետն է հայտնում, որ աշխարհագրորեն տարանջատված համայնքները հայրենիքում ապրող իրենց ազգի մի մասն են կազմում հավաքական հիշողության և հայրենիքի հետ զգայական կապի շնորհիվ: Վ. Սաֆրանը հակված է այն գաղափարին, որ «սփյուռք» հասկացությունը կարող է կիրառվել այն գաղթական համայնքների վերաբերյալ, որոնց միավորում են հետևյալ ընդհանուր գծերը.*

*1. Նրանք (կամ նրանց նախնիները) իրենց նախահայրենիքից սփռվել են դեպի երկու կամ ավելի օտար երկրներ, ունեն հավաքական հիշողություն, պատկերացումներ կամ տեսլական իրենց իրական հայրենիքի մասին՝ ներառյալ նրա աշխարհագրական դիրքը, պատմությունն ու ձեռքբերումները, «հավատացած են», որ իրենք լիովին ինտեգրված չեն ընդունող հասարակությանը և, հավանաբար, երբեք էլ չեն կարող ինտեգրվել, ուստի և մասամբ օտարված են այդ հասարակությունից:*

*2. Իդեալականացնում են իրենց պատմական հայրենիքը և կարծում, որ բարենպաստ պայմաններ ստեղծվելու դեպքում իրենք կամ իրենց զավակները կվերադառնան հայրենիք՝ հավատացած, որ Սփյուռքի յուրաքանչյուր անդամի նպատակը պետք է լինի իրական հայրենիքի պահպանումը և վերականգնումը, դրա անվտանգությունն ու բարեկեցությունը:*

*3. Զանազան ճանապարհներով շարունակում են պահպանել կապը հայրենիքի հետ, և նրանց էթնոհամայնքային գիտակցությունը և միասնությունը բնորոշվում են այդպիսի կապի առկայությամբ[4]:*

*Սփյուռքագիտության մեջ նշանակալի է նաև* ***Գ. Շեֆերի*** *ներդրումը: Նա ընդգծել է հայրենիքի-սփյուռքի միջև գոյություն ունեցող անքակտելի կապը, իսկ հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր հարաբերություններում առանձնացրել է հետևյալ գործոնները. ընդունող երկրում անհատները ձգտում են պահպանել իրենց էթնիկ, ազգային և կրոնական ինքնությունը, և նրանց ցանկությունն ու իրավունքն է սփյուռքի անդամ ճանաչվելը: Նրանք որքան ամուր են պահպանում իրենց ինքնությունը, այնքան ուժեղ են կապվում հայրենիքի հետ և մասամբ են ինտեգրվում ընդունող երկրում: Գ.*

---

[3] *http://www.arteria.am/hy/1331123076.*

[4] **Safran W.** *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return (Diaspora, 1991, 1(1), pp. 83-84).*

*Շեֆերը կարևորել է նաև սփյուռքյան կազմակերպությունների և ցանցերի գործոնը, որոնք ապահովում են կապը համայնքների և հայրենիքի միջև՝ նպաստելով անհատների գոյատևմանը, ակտիվ ապրելակերպին, միևնույն ժամանակ՝ ընդունող երկրում նրանց ոչ ամբողջական ինտեգրմանը: Գ. Շեֆերի կարծիքով սփյուռքյան կազմակերպությունների ցուցաբերած «առավելագույն հավատարմությունը» այն միակ գործոնն է, որ կարող է ապահովել հայրենիք-սփյուռք անքակտելի կապը: Կարևոր գործոն են նաև հայրենիքի և ընդունող երկրի հարաբերությունները, որոնք ուղղակիորեն են ազդում սփյուռքի գործունեության վրա: Եթե հայրենիք-ընդունող երկիր հարաբերությունները բարիդրացիական են, ապա Սփյուռքն իր գործողություններում ստանում է հարաբերական ազատություն: Իսկ եթե դրանք լարված են, ապա այն կանգնում է երկընտրանքի առջև[5]: Սփյուռքագետն անդրադարձել է նաև ընդունող երկրում ներգաղթողների ոչ ամբողջական ինտեգրմանը և դրան խաթարող գործոններին: Նոր առաջացող Սփյուռքին պատկանող անհատների մեծամասնությունը առաջին սերնդի ներգաղթողներ են, որոնք ընդունող երկրում մշտական բնակիչներ են: Բնակության առաջին ժամանակահատվածում նրանք սովորաբար պահպանում են իրենց էթնիկական ու ազգային ինքնությունը, մշակութային հին մտածելակերպն ու վարքը: Սա բացատրվում է այն բանով, որ ներգաղթողները դեռ մասամբ ծանոթ չեն ընդունող երկրի մշակույթին կամ սոցիալ-քաղաքական միջավայրին և չեն խոսում տեղի լեզվով: Հետևաբար, ընդունող երկրում նրանք մասամբ են ինտեգրվում, երբեմն էլ ինտեգրումը դառնում է անհնար: Գ. Շեֆերը կարծում է, որ հայրենիքի հետ ամուր կապերն են նպաստում ընդունող երկրում ամբողջական ինտեգրման դանդաղեցմանը: Հայրենիք-Սփյուռք-ընդունող երկիր հարաբերություններում շատ բան կախված է նաև ընդունող երկրի բարյացակամությունից և Սփյուռքի անդամների ինտեգրումը խթանող քաջալերումից:*

*Նոր առաջացող սփյուռքի անդամների կողմից իրենց հայրենիքի հետ սերտ կապեր պահպանելու հիմնական պատճառներն են՝*

*1. Այսպես կոչված, «սփյուռքցիները» ձգտում են հայրենիք վերադառնալու հեշտ հնարավորություն ապահովել, որը էթնիկ-ազգային երազանքի պահպանման արդյունք է կամ բխում է ներգաղթողների շահերից:*

*2. Հայրենիքում գտնվող սոցիալական խմբերի հետ սերտ կապերի առկայությունը և այդ հարաբերությունները շարունակելու իրենց ձգտումը:*

*3. Տնտեսական գործոնը, որ կանխարգելում է սփյուռքցիների ամբողջական ինտեգրումն ընդունող երկրում, քանի որ նրանք ներգրավվում են իրենց հայրենիքում տնտեսական իրավիճակի բարելավման գործում և որոշ ժամանակ անց*

---

[5] **Sheffer G**. *Transnationalism and Ethnonational Diasporas (Diaspora, 2006, 15.1, pp. 18-19).*

*ֆինանսական ռեսուրսներ կուտակելուց հետո, ավելի շատ հակված են այդ ռեսուրսները ներդնելու ոչ թե ընդունող, այլ հայրենի երկրում*[6]*:*

*Սփյուռքագիտության մեջ Սփյուռքին բնորոշ համընդհանուր չափանիշները և «հայրենիք» եզրույթի բովանդակությունը տվել է* ***Ռ. Բրուբեյքերը****:*

*Ըստ նրա՝ Հայրենիքն այն իդեալական վայրն է, որտեղ պետք է անպայման վերադառնան անհատները: Սփյուռքին հատուկ են հետևյալ չափորոշիչները.*

*1. Սփռում/տարածում - այսօր սա ամենաընդունելի, նաև ամենապարզ չափանիշներից է, որը կարող է մեկնաբանվել որպես բնակչության հարկադրական տեղափոխություն: Չնայած դա լայնորեն ընդունված է, այնուամենայնիվ չի կրում համընդհանուր բնույթ: Սփյուռքը կարող է բնութագրվել նաև որպես Հայրենիքից դուրս ապրող մարդկանց հատված: Նմանատիպ սահմանումները թույլ են տալիս սփյուռք համարել անգամ հոծ զանգվածով հաստատված բնակչությանը, եթե նրա մի հատվածն ապրում է իր էթնիկ հայրենիքից դուրս՝ որպես փոքրամասնություն:*

*2. Կողմնորոշում դեպի Հայրենիք - սա ենթադրում է կողմնորոշվածություն դեպի երևակայական հայրենիք՝ որպես արժեքների, ինքնության և հավատարմության աղբյուր: Այս չափանիշը՝*

- *ներառում է Հայրենիքի մասին հավաքական հիշողության կամ պատկերացումների առկայություն,*
- *նախնիների Հայրենիքը դիտարկվում է որպես իրական, կատարյալ տուն, ուր վերջ ի վերջո պետք է վերադառնա անհատը,*
- *միտված է հավաքական կերպով Հայրենիքը վերականգնելուն և նրա պաշտպանությունն ու բարգավաճումն ապահովելուն,*
- *արտացոլում է Հայրենիքի նշանակալի ազդեցությունը անհատի ինքնության ձևավորման վրա:*

*3. Սահմանազատման պահպանում, որը ենթադրում է հյուրընկալող հասարակության մեջ տվյալ խմբի ինքնության պահպանում:*

*Ռ. Բրուբեյքերի կարծիքով սահմանազատման պահպանման չափանիշը պետք է գործի երկարաձգված ժամանակում: Սա հազվադեպ է ձեռք բերում բացահայտ բնույթ, սակայն չափազանց կարևոր գործոն է: Ռ. Բրուբեյքերը նշում է նաև Հայրենիքի՝ պատմական լինելու հանգամանքը: Թեպետ սփյուռքացման հետևանքով Հայրենիքը երբեմն դադարում է գոյություն ունենալ, այնուամենայնիվ, շարունակում է մնալ սփյուռքապահպան կարևոր գործոն*[7]*:*

---

[6] **Sheffer G**. *Integration Impacts on Diaspora-homeland Relations, 2010, MMG Working Paper 10-08 ● ISSN 2192-2357, pp. 20-22:*

[7] **Brubaker R**. *Diaspora. Ethnic and Racial Studies, 2005, Vol. 28, N 1, January, pp. 5-6.*

*Սփյուռքի արդի տեսաբաններից* ***Ռ. Կոհենը*** *առաջ է քաշել սփյուռքագիտության զարգացման չորս շրջան: Նա մեկնաբանել է «տուն» եզրույթի նշանակությունը՝ շեշտը դնելով ոչ թե «տարածքային», այլ «բնակավայր», «ծննդավայր» հասկացությունների վրա: Ըստ Ռ. Կոհենի՝*

*1.Առաջին շրջանում «Սփյուռք» եզրույթի դասական կիրառությունը սահմանափակվում էր միայն հրեաների պատմությամբ: 1970-ական թթ. սկսած՝ այն լայն տարածում գտավ՝ աֆրիկացիների, հայերի և իռլանդացիների ցրված համայնքները նկարագրելու համար:*

*2. Երկրորդ փուլում՝ 1980-ական թթ. և այդուհետև «սփյուռքը» կիրառվում է փոխաբերական իմաստով՝ մարդկանց տարբեր կատեգորիաներ նկարագրելու համար, ինչպիսիք են, օրինակ՝ գաղթականները, աքսորյալները, քաղաքական վտարանդիները, օտարերկրյա քաղաքացիները, ներգաղթյալները և էթնիկ ու ռասայական փոքրամասնությունները:*

*3. Երրորդ փուլը սկսվել է 1990-ական թթ. կեսերից, երբ ուսումնասիրվում էր սփյուռք կազմավորող խմբերի էությունը:*

*4. Իսկ արդեն XXI դ. սկզբին հաստատվեց միավորման ներկայիս փուլը, երբ վտանգի տակ էր «սփյուռք» հասկացության վերլուծական և նկարագրական ուժը[8]:*

*Ինչ վերաբերում է հայրենիքի գաղափարին, Ռ. Կոհենը նշում է, որ պարտադիր չէ հայրենիքը զուտ տարածքային առումով պատկերացնել: Այն ավելի խորը իմաստ ունի, և գնալով ավելի է տարածվում «տուն» հասկացությունը՝ իր հավաքական ընկալու-մով ու պատկերացումներով: Եթե Ռ. Բրուբեյքերը կարծում էր, որ պետք է անպայման վերադառնալ Հայրենիք[9], ապա Ռ. Կոհենը նշում էր, որ սկզբնական շրջանում ընդհանրապես «տուն» հասկացությունը ընկալվում էր՝ որպես երազանքների առեղծվածային մի վայր, որտեղ հնարավոր չէ հետ դառնալ: Հետագայում այն ընդարձակեց իր իմաստը՝ նշանակելով ծննդավայր: Նույն իսկ «հայրենիք» հասկացության ըմբռնման մեջ հսկայական տարբերություն կա տղամարդկանց և կանանց մեջ: Կանայք կարծում են, որ Հայրենիքը այնպիսի վայր է, որտեղից նրանք միշտ ջերմություն են ստանում:*

*Ըստ Ռ. Կոհենի՝ Սփյուռքը չի կարող միաձույլ լինել, քանի որ ենթարկվում է միգրացիոն խմբերի ազդեցությանը: Նա իդեալականացնում է «հայրենիքի» գաղափարը և առանձնացնում հավաքական հիշողությունը և պատասխանատվությունը Հայրենիքի պահպանման, անվտանգության և վերականգնելու համար[10]:*

---

[8] **Cohen R.** *Global Diasporas. An Introduction, London, 2008, Second Edition, Routledge, pp. 20-21.*

[9] **Brubaker R.** *Diaspora. Ethnic and Racial Studies, 2005, Vol.28, No. 1, January, p. 5.*

[10] *Նույն տեղում, էջ 29-30:*

*Այսպիսով, Սփյուռքի մասին արդի հետազոտությունները ցույց են տալիս, որ XXI դարում գերիշխողը «սփյուռք» հասկացության, Հայրենիքի և ընդունող երկրի հետ Սփյուռքի կապերի, ինքնության, միջպետական հարաբերություններում նրա դերի և հարակից այլ խնդիրների վերարժեքավորումն ու քննությունն է: Ընդգծելով ընդունող երկրում Հայրենիքի հավաքական ընկալումը, էթնիկ և ազգային պատկանելության զգացումի հարատևությունը, ազգության ինքնության պահպանումը և ի վերջո հայրենիք վերադառնալու ձգտումը՝ տեսաբանները Սփյուռքը համարում են առանձին մարմին, որը ոչ միայն ձգտում է Հայրենիքի հետ կապը հասցնել առավելագույնի, այլև տնտեսական ու քաղաքական ազդեցություն ունենալ միջազգային և պետական համակարգերի վրա:*

## ДИАСПОРА В СОВРЕМЕННЫХ ДИСКУССИЯХ

АНАНЯН М. А.

Резюме

На современном этапе дискуссии вокруг понятия «диаспора» явствуют о том, что происходит переоценка этого понятия, равно как и связей диаспоры с родиной и принимающей страной, а также диаспоральной идентичности, роли диаспоры в межгосударственных отношениях и прочих смежных вопросов.

Диаспора является отдельной структурой, которая ставит перед собой цель расширить и углубить связи с родиной, а также достичь экономического и политического влияния на государственные и международные структуры.

## DIASPORA IN MODERN DISCUSSIONS

M. ANANYAN

Abstract

In modern times discussions regarding the concept of ‘’Diaspora” indicate re-evaluation of the above mentioned concept, as well as ties of Diaspora with the homeland and the receiving country, diasporic identity, the role of Diaspora in interstate relation and other relevant issues.

Diaspora is a separate structure aimed at expanding and deepening ties with the homeland, as well as achieving economic and political influence on governmental and international structures.